ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 505-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագրի առաջընթացի վերաբերյալ

1. Ի կատարումն ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N 505-Լ որոշման N 2 հավելվածի 3-րդ կետի («Բազային տարածական տվյալների շտեմարանի ճշգրտում, արդիականացում, օպտիմալացում և ստանդարտացում»)՝ Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալ մշակվել և մուտքագրվել է Երևան քաղաքի բազմամասշտաբ բազային քարտեզագրական շերտերը (ջրագրություն, ճանապարհային ցանց, ռելիեֆ), ինչպես նաև օդալուսանկարահանման միջոցով ստացված օրթոֆոտոհատակագծերով ծածկված տարածքներում ՀՀ մարզերի բազային քարտեզագրական շերտերը (ջրագրություն և ճանապարհային ցանց՝ բազմամասշտաբ, ռելիեֆ)՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման պահանջներին համապատասխան: